

Քիւ 25667
Մարտ 9, 1978

Արժանաշնորհ
Տ. Տիրան Էհնյ. Փափագեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գլխավէնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Մարտ 7ին ստացանք Փետրուար 12, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքիդ Ժիա-
կան ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւե-
րացման պաշտօնագիրը:

Ձեր դրկած տեղեկագիրները ամբողջական են, սակայն նախ քան մեր վաւերացու-
մը կը փափարինք ձեր ուշադրութեան յանձնել թէ Ժիական ժողովի ատենագրութեան
մէջ նկատեցինք որ, հակառակ անդամի մը կատարած դիտողութեան, ժողովը որոշած
է անտես առնել Թեմական Կանոնադրութեան 7րդ Յօդուածը: Անդամական ժողովը ինք-
զինքին իրաւունք չի կրնար աւել Կանոնադրութեան յօդուածիմը առեսելու: Եթէ բա-
ցառիկ պարագայ մը կար, անիկա նախապէս զէտք էր Առաջնորդի ուշադրութեան քեր-
էր եւ անոր արտօնութիւնը ունենալ՝ որեւէ որոշում առնելէ առաջ:

Համեցէք առաջին առիթով մեզի դրկել անունները այն թեկնածուներուն որոնց
ընտրութիւնը վերոյիշեալ յօդուածի արամադրութեան հակառակ կատարուած կը նը-
կատուի, ինչպէս նաեւ Եկեղեցւոյդ զանձապահի ստորագրութեամբ անոնց արուած ըս-
տացականին թիւը եւ անդամատուրքի վճարման միշդ թուականը, որ հիմ կը ծառայէ
7րդ յօդուածի արամադրութեան գործադրման:

Սիրոյ ողջունելու

ՔՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ